



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 16 ԱՊՐԻԼ 1877

ԹԻԻ 1064

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բարձրագոյն Դուռն ընդ արձակ յայտարարութիւն մի յուղարկեց Եւրոպայի մեծ տէրութեանց ի պատասխանի Մարտի 19—31ին ի մէջ նստա հաստատեալ և կնքեալ սկզբնական դաշնագրոյն՝ որ հաղորդեցաւ կայսերական կառավարութեան որպէսզի ստորագրէ զայն։ Յիշեալ յայտարարութեամբ Բարձրագոյն Դուռն ի մէջ այլոց օրինակ որ պատճառարանութեանց, յառաջ կը բերէ իւր անժխտելի իրաւունքն բողոքելոյ ընդդէմ յիշեալ սկզբնական դաշնագրոյն, զոր չուր ամենեւին ճանաչել։ Վստիկ առանց իւր բողոքակցութեան՝ իրեն դէմ եղած դաշնագիր մը է, կըսէ։

Իրաց այս վիճակին մէջ՝ խաղաղութեան պահպանութեան վերջին յոյն անհետ կըլինի և պատերազմն անհրաժեշտ և յոյժ մօտաւոր է։ Կը հաւատան թէ Ռուսիոյ յառաջագահ զօրացնելու հրաման տրուած է յառաջանալու և թէ հարաւային զօրաբանակն ամառս 18ին կամ 9ին պիտի անցնի զԲոսֆոր գետն։

Կայսերական կառավարութիւնն ևս որ քաջ կըզգայ թէ այս պատերազմն իւր պատին, իւր անկախութիւնն և իւր գոյութիւնը պիտի պաշտպանէ, քաջալերեալ յիշաւանց իւրոց և խառնացեալ յարգարութիւնն Աստուծոյ, վերջին ճգամք և զինուորական մեծ զօրութեամբ դէմ պիտի դնէ Ռուսիոյ յաճակմանց։

Մեծ տէրութիւնքն՝ ըստ ամենայն երեւմանց կըզգայ հանդիսատէս պիտի մնան այս պատերազմին՝ որ արդէն հրատարակեալ կը համարուի։ Բանդի Բարձրագոյն Դուռն և Ռուսիոյ կառավարութեան մէջ եղեալ պաշտօնական յարաբերութիւնքն դադարեցան, Ռուսաց դեսպանատան բոլոր գործակալք մեկնեցան ի Կ. Պոլսոյ և Թուրքիաբնակ Ռուս հպատակք Գերմանիոյ պաշտպանութեան աներկ գրութեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՒԹՈՅ

Ընդ Պագի (Զվիցցեր)։

... բարեկամ,

Այս անգամ ի խոր սուգ համակեալ սրտիւ զինքն ձեռք կառնում մի քանի տող բան վերջապէս գրելոյ առ ԱՐՇԱԼՈՒԹՅՈՒՆ ի խոր սուգ համակեալ սրտիւ կըսեմ, քանզի անագորոյն մահը մանկաւորն ի ձեռքին, անակնկալ սցեքը ինքն մ'ընկելով աստ՝ մի ծաղկահասակ առաքելու, ուսումնասէր և եռանդուն Հայ երիտաւորի կենաց թեւն անողորմաբար կտրեց։ Գրութիւն մ'էր սա, որ անաչառ խօսելով, ի հայրենեաց երեք տարի առաջ թողլով սիրէք և բարեկամք աստ եկած էր ինձ հետ ունեւոր շնորհակալ։ Ստուգիւ յոյժ մխիթանեալ էր ինձ այս օտար երկրի մէջ մի ազնիւ բարեկալատ անձ հայրենակից և պանդխտակից անհաշիւ, արդարեւ նժգեհին համար ասի անհաշիւ երջանկութիւն մը և անբացատրելի օրհնութիւն մ'է։ Յեղիդիա տէր Սահակեան, որ վաղաժամեակ բարեկամս անունը։ Դեռ անցեալ կենաց գարունը տեսած էր, շէ տարին երբ արած էին դեռ իւր վրայէն՝ երբ նախորդ տարի իւր ականջին։ Եղայք վայր եկեղեցի և այլ անցանիցեալ։ և ահա հնազանդեցաւ արաւը իւր Արարչին հօր հրամանին և աւանդեց

Օսմանեան զինուորական պատրաստութիւն իւր, որք առ էր իստականացէս յառաջողոյ եւ կըշարունակէ միշտ մեծ գործունէութեամբ և ազգասիրական ու կրօնասիրական եռանդեամբ։ Բոլոր ժողովուրդն՝ որ պատրաստ է մեծամեծ զոհողութիւններ ընելու այս ծանր պարագայիս մէջ, հաճութեամբ սրտի իմացաւ զհրատարակութիւնն պատերազմին։ Ի սկսանիլ թշնամութեան գործոց, օգոստոս Սուլթանն պիտի փութայ անձամբ Դանուբի գաւառն երթալու։ Կը հաւատան թէ ի կողմանէ Ռուսաց ևս՝ նուազագոյն չեն զինուորական մեծամեծ պատրաստութիւնքն որպէս և պատերազմական եռանդն, և թէ Չարն պիտի չյապաղի ի Քիւնե երթալու, որպէսզի իւր ներկայութեամբ քաջալերէ զզօրաբանակ իւր։

Մեծին—Բրիտանիոյ նոր դեսպան միտոր Լէյթոն՝ որ յանցելով շարաթու եհասի Պոլսոյ, փութացաւ այցելութեան երթալ Մեծ—Եպարգոսին և արտաքին գործոց պաշտօնէս Սպէկթ փաշային, որոց հետ երկար խորհրդակցութիւն ունեցաւ։ Նմանապէս պատիւ ունեցաւ օգոստոս Սուլթանին ներկայանալու։ Մեծ տէրութիւնքն և մասնաւորապէս Անգղիան՝ որք ի սկզբանէ անտի վերջին ճգամք աշխատեցան՝ բայց չյաջողեցան պատերազմին առաջն առնուլ, այժմ հարկաւ պիտի շարունակեն իրենց ջանքը որպէսզի թշնամութեան գործքն չերկարին, եւ րոպական չփութութիւն մի չծագի և հաշտութիւնը չյապաղի։ Այս մարդասիրական նպատակաւ է կարծիք, որ Անգղիոյ կառավարութիւնն փութացաւ զնորընտիր դեսպան իւր յուղարկել ի Կ. Պոլսոյ, որոյ դիւանագիտական տաղանդն և Թուրքիոյ համար ունեցած համակրութիւնն ապացուցեալ են բազմօք։

Թուրքերէն լրագիրն ՍՄՊԱՀ անուն կըծանուցանէ թէ անյապաղ կայսերական հրովարտակ մի պիտի ելլէ, որով հունգարացի վրաբա

զհոգին Անոր՝ յորմէ ընդունած էր զայն։ Բարեբաղոյ, հեղ խոնարհ և փութաշնան անձ մ'էր հանգուցեալ Սահակեանն, և իւր այս ընտիր ձիւքերով սիրելի հանդիսացած էր յայն ճեմարանին պատուարժան գաղափարաց և համայն աշակերտաց, յորոց շատերն լոցին իւր վրայ և արտասուաց հեղեղներ հոսեցուցին յաչաց իւրեանց՝ իւր վշտայեալ հայրենակցին հետ, որ այժմ՝ այն տեղերն ի յիշատակ հանգուցելոյն ի գիր կարձանային։ Երջանիկ մահուամբ չուեց նա ցաւոյ ու վշտաց այս աշխարհէն՝ ննջելով ի Գրիստոս Յիսուս, որում անկեղծաբար կը հաւատար և զոր կըսիրէր նա սրտագին իբր իւր փրկիչն և Աստուածը։ Ո՛հ, ո՞վ չցաւել, ազնիւ բարեկամ, մի այսպիսի ծաղկահասակ երիտաւորի այսչափ շուտ ի կենաց զրաւելուն վրայ։ և սակայն ո՞վ սրտի գոհունակութեամբ չնկատեր մի հաւատացելոյ խաղաղ ի սեւա դադաղին հանգչող անշունչ մարմինը՝ երբ նա մտաբերէ որ Ս. Աւետարանը և քրիստոնէական Ս. Եկեղեցին երջանիկ ու երեցս երանելի կըկոչէ զայն՝ որք ի Գրիստոս Յիսուս կըննջեն։ Եւ լուայ ձայն յերկնից, կըզրէ Յովհ. Աւետարանիչը, որ ասէր ցիւս. գրեալ, երանի մեռելոց որք ի Տէր ննջեն այժմիկ վաղվադակի, զայս առնէ հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չօրան զհետ նոցա. գլ. 14

Իբր իւր հայրենակից եղբայրը՝ ծանր և դառն պարտաւորութիւն մ'ունէի ես՝ յետ բարեկամս վախճանելոյն, այն էր իւր ընտանեաց և բարեկամաց՝ իրենց սիրելոյն մահուան գոյժն հաղոր

դորդելուն բարձր հրամանատարութիւն մի պիտի անհունի օսմանեան զօրաբանակին մէջ։

—Պէլճիքայի կարմիր խաչին ընկերութիւնն ի մօտ աւուրս յուղարկեց ի դուռն Սպարապետի ի Կ. Պոլսոյ 20 սնտուկ, յորս կը պարունակին ծուառ (թիֆթիք), վաթեթ (պաղ), բարձիկ և պանազան դեղորայք վստն վերաւորելոց և հիւանդաց օսմանեան բանակին։

—Իրմանամբ թէ Թուրքիոյ ընդհանուր հիւպատոսն որ ի Բէշթա՝ 7800 ֆիլլին յուղարկեց է Թանձնաժողովոյն օգնութեան ի Պոլսոյ։ Այս գումարն ժողովուրդն է հունգարիոյ մէջ բացուած ստորագրութիւններէն ի նպաստ վերաւորեալ զինուորաց կայսերական զօրաբանակին։ Յիշեալ հիւպատոսն յուղարկեց է նաև ի պաշտօնատունն Սպարապետին երկու մեծ մատուկներ՝ լեցուն ծուառներով (թիֆթիք), որք նուիրեալ են ի հունգարացի տիկնայց։

—Կ. Պոլսոյ ՆԱՆՈՂՈՍ յոյն լրագիրն կըծանուցանէ թէ օգոստոս Սուլթանն բարեհաճեցաւ իւր մասնաւոր գանձէն 1500 լիւա տարեկան նպաստ մի սահմանել վստն մարդասիրական հաստատութեանց՝ վերաբերելոց յոյն հասարակութեան Կ. Պոլսոյ։

—Կայսերական հրամանագրով, Սուրենեան մեծա. Յովհաննէս էֆէնտին՝ որ Առեւտրական երրորդ դատարանին նախագահն էր, վերաբնութեան ատենին առեւտրական բաժնին դեր—նախագահ կարգեցաւ։

—Մեծաշուք իզգէթ էֆէնտին՝ որ կայսերական հեռագրաց և թղթատարութեանց վերատեսչի օգնական էր, նոյն կրկին պաշտօնատանց վերատեսուչ կարգեցաւ փոխանակ Թընկըեան Եսվեր փաշային, որ հրաժարեցաւ։

—Օգոստոսիաւ Սուլթանին երկրորդ քարտուղար Սիւլէյման—Պէյն՝ Ֆրանչիսկոս—Յովսէփ կարգին շքանշանաւ պատուեցաւ ի վեհափառ կայսերէն Աւստրիոյ։

դեւ նոցա. ո՛հ, բարեկամ, քանի՞նք դժուար էր ինձ փափկասիրտ օրիորդի մը (իւր քրոջ), մանկահասակ պատանուոյ մը (իւր եղբոր), և սքըտագին բարեկամի մը (իւր մտերմին, իւր սրտի հատորին) գրել ձեռք սիրելին ոչ ևս է"։ Գիտեալ նոցա սրտին գաշայն մի պիտի մխելի. և ստակայն հարկ էր զայս դառն պարտաւորութիւն կամաց կամաց կատարել. և ահա նոյն շաբթուան թղթատարը սգառիթ նամակս փութ անակի ի Պոլսոյ կը փոխադրէր։ Անցան օրեր և շաբթուանք, բայց այս ցաւալի դէպքը օրըստօրէ սրտիս մէջ առաւել խոր տպաւորութիւն կընէր, մանաւանդ երբ ի սիրելեաց և բարեկամաց հանգուցելոյն նամակի նամակի վրայ գլխուս տեղաւ սկսաւ, որք ոչ այլինչ կը պարունակէին, բայց եթէ ողբ, հառաչանք, հեծեծանք... սակայն ոչ միայն կարտասուէին սոքա իրենց սիրելոյն շիրմին վրայ, այլ նաև կը մխիթարուէին յաւիտենական կենաց քաղցր յուսով, որով կըսէին փէին նաև պանդխտոյն վշտացեալ սիրտը։ Իւր մտերմիք (Մ. Պ. Միլասեան ազնիւ պարմանին) այս առթիւ, հետեւեալ տողերն կըզրէր ինձ. «Այս ցաւալի դէպքն իրաւ շատ օգտակար կընայ բլաւ մեզ. nous devenons meilleurs en méditant la mort, կըսէ գաղղիական ասացուած մի. և յիշաւ ի սիրելեաց գերեզմաններն շատ օգտակար դասեր կըտան մեզ. անոնց անցուցած կեանքը ըստ մասին լաւ օրինակ մը կըլինի և ազդու յորդորներ ու սրտառուչ խրատներ կըտայ, և իրենց մահուան վրայ տարած յաղթանակը իբր հզօր ուսուցող մը քրիստոնէական սուրբ կրօնին»

ԱՐՇԱՆՈՅՍ

Ըստ խնդրոյ Ազգօգուտ ընկերութեան՝ ի նորումն հաստատուելոյ ի քաղաքիս, հրատարակեմք զյետագայ յայտարարութիւնն:

Յարգոյ խմբագիր ԱՐՇԱՆՈՅՍ:

Հաճեցէք հետեւեալ գրութիւնը Ձեր ազգօգուտ լրագրին մէջ հրատարակելով շնորհապարտ թողուլ զմեզ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՀԱՅՍ ՉՄԻՌՆԻՈՅ

Հաւաստի կերպիւ կըլսենք որ քաղաքիս ազգայնոց մէջէ մի քանի անձինք կըլսանան ժողովրդեան մէջ կասկածներ և անստատեմութիւն սերմանել ընկերութեանս նպատակաց համար, իբր թէ այս նպատակները՝ ազգայնոց ֆնտաւար ըլլալէ զատ, երկպառակութիւն յարուցանելու առիթ պիտի տան. և այսպէս կ'աշխատին համոզել զժողովուրդը խորշիլ անկէ և անոր աջակից ըլլալէ ետ կենալ: Յիմարութիւն է ենթադրել որ ժողովրդային ընկերութիւն մի՞ ժողովրդեան փնտաւար ըլլալու հանգամանքն ունենայ, մանաւանդ երբ նոյն ընկերութիւնն իւր նպատակաց սահմանն իսկ դժած է. այն է՝ ազգային օրինաց նկատմամբ եղած որեւէ զանցառութիւն մի եթէ նշմարէ՝ բողոքել առ որ անկ է: Մինչդեռ մեր արժանքնաւոր Առաջնորդը սուրբ Զատիկ առաջին օրն իւր տուած բնութիւն քարոզին մէջ կը շնորհաւորէ զընկերութիւնն և նորա նպատակները գովելով քաջաբերել խօսքեր կ'ուղղէ՝ այսպիսի պարագայից մէջ մի քանի անձանց կողմանէ երեւած այս անտրտման ընթացքը մեզ և արդոյ հասարակութեան կասկածել կուտայ որ իրենք օրինաց անթերի գործադրութեան մասին թոյլ կամ անտարբեր են, և կըլսանան այժմէն փճացնել այնպիսի ընկերութիւն մի՞ որ թերեւս ազգային մէջ իրենց ապօրէն և ազգափնտա նպատակաց դէմ քարքշատն մի ըլլալ կ'սպառնայ:

Այս առթիւ կըլսնդրենք մեր քաղաքակից ազգայիններէ չխաբուիլ այսպիսի անձանց թշնամական տարածանքութիւններէ և ամէն ոք պէտք է վստահ ըլլալ, որ Ազգօգուտ ընկերութեանս նպատակն է բողոքել օրինաց նկատմամբ եղած զանցառութեանց դէմ, պաշտպանել ժողովրդեան իրաւունքը և աշակից գտնուիլ նորա յառաջագիւծութեան և օգտին:

Ատեմապետ, Մ. Գրի. Յ. Պալապալեան
Ատեմապետ, Պ. Նշան Միրզա:

Երկնային, Աստուածային, ճշմարիտ և յաւիտենական լինելուն մեզ ազգու քարոզներ կըկարգայ մեր բոլոր կենաց օրերում: Յետոյ կըլսաւեւոր. ո՞հ հոգիս մեռնելու չափ տրտում է, կեանքը խիտ, խիտ դառն կուգայ ինձ. ո՞հ Աստուած իմ, ի՞նչ պիտի ընեմ, ի՞նչպէս պիտի ապրիմ այլ ևս աշխարհիս վրայ. դեռ կայ ինձ համար հաճոյք, ինչո՞ւ թիւն և երջանկութիւն. . . . Ո՛վ փշալից ցաւոց և արտասուաց ձոր, քու սուր փուշերդ զօրաւոր կերպիւ մտան խըրեցան իմ սրտիս մէջ. . . . ո՞հ, ո՞հ ես սիրելի բարեկամ Յեղիշիւ, երբ ես ալ արդեօք առքեղ պիտի դամ, ո՞վ դու արտմեալ հոգեոյս սիրոյն առարկայ և իմ միակ միջնորդութիւնս, ո՞հ եկ, եկ սիրելի զիս. քու հոգիդ անշուշտ զօրաւոր ազդեցութիւն ունի. եկ զիս միջնորդարել ո՞վ դու որ զիս կըսիրելիր. եթէ մարդոյս հոգին անմահ է, ո՞չ ապաքէն նորա օշն ալան. մահ է. . . . Ո՛վ անգութ աշխարհ, չեմ կարող արդեօք որ և է սիրտիս միտարարել ինձ. չունիմ միջնորդ մէջ պահած բերկրանք մը՝ որով վշտացելոյս տրտում հոգին ուրախացնելոյ կարող լինիս: Ո՞հ լաւ գիտեմ որ դու ոչինչ չունիս, տկար, իսպառ անզօր ես դու. մահը քեզ մէ հազար անգամ ուժեղ է. նա միայն նա՞ որ Գողգոթային վրայ խաչին դառն մահէն ճաշակեց, նա՞ որ մեռաւ և յարեաւ ի մեռելոց, նա՞ որ, ո՞վ մահ, քու պողպատի նման կարծր ու անբեկանելի շղթաներդ խորտակեց, նա միայն կընայ թշուառ մարդկութեան ստանկ դառն և աղէտալի պարագայից տակ միջնորդութիւն և

—ի տեղեկութիւն բարեսէր ազգայնոց արժան կըհամարիմք քաղաքիս Ազգօգուտ ընկերութեան գործադիր խորհրդոյն անդամաց անունները նշանակել աստանօր, որք յիշեալ ընկերութեան հիմնադիր 27 անդամոց քուէարկութեամբ իրենց մէջէն ընտրեալ են:

Յարգոյ պարոնայք

Գրիգոր Յ. Պալապալեան,	ատենապետ,
Պ. Նշան Միրզա,	ատենադպիր,
Եփրեմ Գապարեան,	արկղապետ,
Պողոս Տայիեան,	անդամ,
Մկրտիչ Յակոբեան,	»
Մկրտիչ Անանիան,	»
Նազարէթ Պաքըճեան,	»

ՄԱՀԱԳՈՅԺ

Մեծարդոյ մահտեսի Յօհաննէս աղա Կ. Տէտեան, որ վաղեմի բարեհամբաւ երեսիլի գերդաստանի մը սերունդ էր և վաճառականութեամբ կըլրադէր, ամուսն ճին՝ կաթնուածի հարուածով առ Աստուած փոխեցաւ ի հասակի 78 ամաց: Հայր՝ ամուսնացեալ արժանայարգ որդւոց և նախահայր թոռանց, հանգուցեալն բարի յիշատակներ կըթողու, որք պատիւ կըբերեն թէ իւր անուան և թէ Ազգին:

Վախճանելոյն յուզարկաւորութեան հանդէսն արժանաւոր փառաւորութեամբ կատարեցաւ, որում ներկայ գտնուեցան բազմաթիւ ազգային և օտարազգի ուղեկիցք:

Կ. Պօլոյ ԼՐԱԳԻՐ Թերթին 312 թուոյն մէջ հետեւեալ յօդուածը կընթեռնուի:

Կըհաւատան թէ Տիվիսի Առաջնորդ գերաւ Այվազովքի Գարրիէլարքեպիսկոպոսը հրաման զրկեր է իր թեմին բոլոր Հայ վարժարանաց հոգաբարձութիւններուն, որ Օսմանեան հպատակ եղող և յիշեալ վարժարանաց մէջ պաշտօն վարող հայազգիներն արտաքսն, և մինչև որ Ռուսիոյ հպատակ չըլլան՝ չընդունուին:

Այս լուրն աւելի մեծ զարմանք կըպատճառէ անոր համար որ Ռուսիոյ կառավարութիւնն ալ բնաւ այդպիսի հրահանգ մը չէ տուած Տիվիսի կառավարութեան:

Մեք ևս կըզարմանամք առաւելապէս անոր համար որ ԼՐԱԳԻՐ Թերթին «Կըհաւատան» ասուով՝ չվարանիլ հրատարակելու այսպիսի անտեղի լուր մի, որոյ անհիմն լինելն նոյն ինքն կըհաստատէ յառաջ բերելով թէ՛ «Ռուսիոյ կառավարութիւնն այսպիսի հրահանգ մի չէ տըր»:

Հոգեոյն սիրտիս մատակարարել Ահա այսպէս է մարդկային կեանքը, աղնիւ ԱՐՇԱՆՈՅՍ, զորս դու յ37 ամաց հեռէ Արարտայ ամպամած և մառախլապատ գաղաթէն ի նկատ առած և պարտաւորութիւն համարած ես կենաց զանազան ակտեր առիթներն, ուրախութիւններն, և սուգ ու տրտմութիւն պատճառող դէպքերն միանգամայն պատուարժան ընթերցողացդ ուշադրութեանը յանձնել: Յաւ է ինձ որ այս անգամ կարող չէի ուրիշ ո՛ր է բան թղթակցութեանս նիւթ ընել քան զայս սրտաճնկի տեսարան՝ կենաց ասպարիզում. և կըլսուամ որ այս ալ իւրովսն բաղմնց օգտակար կրնայ հանդիսանալ, մանաւանդ որ այժմ բազում ծնողք սիրասուն զաւակներ ունին Եւրոպայում ի պանդխտութեան, և եթէ մին կամ միւսը մի այսպիսի դառն բաժակ արդէն ըմպած է՝ օտար երկրի մէջ զաւակ մի անգութ մահուան ճիրանաց զոհ տալով, այնպիսի ծնող մի սոյն տողերն կարդալով անտարակոյս միջնորդութիւն և հոգեւոր սկստմանք պիտի վայելէ:

Ի վերջոյ պարտ անձին կըհամարիմ պատուական ԱՐՇԱՆՈՅՍ խմբագրութեան հրապարակաւ ևս իմանկեղծ շնորհակալութիւններս մատուցանել վառն այն սիրալիր ընդունելութեան, որ ցարդ իմ թղթակցութեանս յօժարակամ ընծայուեցաւ: Յոյս մեծ ունիմառ Աստուած, որ ես ալ յայնմհետեւ աւելի ջանք ի գործ դնել պիտի կարենամ՝ սոյն հիւրընկալութիւնը ըստ արժանոյն լիովին վայելելոյ համար:

Պագէ՛լ, 16—28 Մարտ 1877

Միհրան

ւած Տիվիսի կառավարութեան:

Մեր կողմանէ կըլսաւեւորէ որ՝ եթէ յիշեալ լուրն ամենափոքր իսկ գոյութիւն ունենար, հարկաւ Տիվիսի ազգային լրագիրը որեւէ կերպիւ յիշատակութիւն մի ըրած պիտի լինէր. ուստի կըհետեւեցնեմք թէ անպիտան դաստաւի միւր կամ դասատուաց ոմանց անիրաւ գծառութեան արդիւնքն պիտի լինի յիշեալ ստապատիր յօդուածն:

—Ի նամակէ ուսումնական և բանասէր բարեկամի միոյ՝ ի Տիվիսի բնակելոյ, արժան համարեցաք քաղել զհետեւեալ տեղեկութիւնն:

«Ենթիւ գրաբառին և աշխարհագրական յղի և աստանօր, մանաւանդ ի գերաւ Այվազեան տէր Գարրիէլ գիտնական Առաջնորդէ մերմէ յերեկորին գրականական ժողով» զոր սահմանեալ է Նորին Սրբազնութիւնն ըստ իւրաքանչիւր եօթնեկաց, և յորս հաւաքին հարկեր չափ և աւելի բանասէրք և ուսումնասէրք տեղւոյս: Ի մեզ այս կարծիք տարրացեալ և ընդունելի հասարակաց համարեալ է՝ զի պարտ և արժան է մեզ և ամենայն բանասիրի հայկազնոյ հետամուտ լինել ամենայն փութով քաջալարթ լինելոյ ի հիմնութեան սլատուական լեզուի նախնեացն մերոց և հայրապետաց սրբոց. վասնորոյ և ի դպրոցս մեր, մանաւանդ ի բարձրագոյն դասարանս, ուսուցանել զայն մանկուոյն գէթ այնչափ՝ զի դիւրաւ իմասցին զպարզախօս զըրուածս նախնեացն մերոց և զերկեղեցական գիտառահասարակ: Իսկ զաշխարհիկ բարբառ յտաւելի և կոկել ըստ կարի՝ ի հարկէ ի դրոցն լեզու մերճեցուցանելով զայն տակաւ առ տակաւ, և այնու դասախօսել ի սկզբնական դասարանս դպրոցաց:

«Աստանօր» ի Տիվիսի, որպէս գիտէք, երբեք լրագիրք գտանին ազգայինք, ՄՇԱԿ, ՄՆԱՌԱՌ և ՓՈՐՁ: Խմբագրապետ առաջնայն թէպէտ գերմանական ոգւով և սկզբամբ տողորեալ, բայց երիտասարդ է, ի բազում ինչ իրս ողջափառ, հանճարեղ, եռանդուն և ծանրաղլուխ միանգամայն: Երկրորդն՝ հանդերձ իւրով խմբակաւ միշտ հակառակ լեալ է կառավարութեան սրբոյ իշխմանն և ամենայնի որ գործիցի անդանօր իսկ ի մեկնիլ աստի նախորդ Առաջնորդին մերոյ, զոր միակ պաշտպան և ջատագով համարէր կարծեաց իւրոց և ընթացից, յաւելեալ ի զայնոյթ, և ջանահնար լինի պախարակել և պարսաւել դարձեալ և առաւել քան զառաջինն՝ ոչ միայն զիշխմանն, այլև զամենայն ոք որ հաւատարիմ պաշտօնեայ իցէ միակ սրբազան կեդրոնական Մայր Աթոռոյ ազգիս և Հայրապետի նորա: Իսկ երրորդն՝ այսինքն ՓՈՐՁ հանդէսն, որ ի մերում օրագրութեանս արդարեւ իսկ քաղաքէ ի մի քաղաք (anachronisme) կաղմ իւրով տարապայման ստուարութեամբն, հաւաքումն է պէսպէս պիտանի և անպէտ յօդուածոց, և ըստ ուղղութեան թերեւս յարմարագոյն ևս էր ԱՐՁԱՅԱՆԳ ՄՆԱՌԱՌ անունանել զայն քան թէ ՓՈՐՁ:

—Իշնորհալի նամակէ գրելոյ տու մեզ ի Երրորդումն ամսոյս ի Պատրիարքական փոխանորդէ Կ. Պօլոյ ի գերաւ Միրեան տէր Յովհաննէս առաք. քահանայէ, հաճութեամբ սրտի յառաջ բերեմք զհետեւեալ ազգասիրական բանասիր պաշտպանութիւն գրաբառ լեզուի մերոյ:

«Ընթեռնում յէջն պատուական ԱՐՇԱՆՈՅՍ ՍՈՅԳ զլիճարանութիւնս ուսումնականաց ոմանց ազգիս ի վերայ գրաբառ և աշխարհիկ անուանեալ լեզուի և բարբառոյ մերում, և զարմանամ յոյժ թէ զիմարդ կարէ մարդ յետ յարբուն հասանելոյ՝ զկաթն անդարար և կենսառիթ իւրոյ գոյութեան, ջամբեալ նմա ի յորդառաւ ստեանց խնամածու Մօրն՝ ապախտ առնել և ուրանալ, և ըստ այնմ՝ քարոզ կարգալ և աղաղակել թէ շիճուկն(1) բաւական իցէ անդեան և կենդանութեան մարդոյ:

«Գրոց անուանեալ բարբառ մեր՝ ծանոց մեզ և աշխարհի թէ է ազգ. Հայոց որ ունի զճն լեզու. նա պահեաց զագգն և նա ետ մեզ ընդ պատմութիւն մեր: Նովառ ուսաք զհաւատ մեր և գիւրն՝ որովք և պահպանեցաք զԱզգութիւն

(1) Փեմիլ սուրբ:

մեր չնայած ի ստեղծման զգալի փոփոխությունները և տուր օրգանային նորա զինվածության և ահա ունեցիս երեխայս ազատության և տխրության, որք չէ տեսնալ զարե, անհրաժեշտ ի կենաց և մի բան մանկունք Հայոց պարտին անանիլ այսու կենդանորար կաթիլը պարտաւին, զի և զաշխարհին յետ այնու՝ կարեցին ծառքել և կոկել զօրութեամբ նորին և լինիլ միտարարաւ և իրերածանօթ օրգիւք Մօրն Հայաստանեայց ։

Այս են իմ խոնարհ կարծիք . բայց և ոչ կարծիք արհամարել զհերքին նպատակ Աշխարհաբաւեանց որք կամին զիւրադոյնս և մերձաւորադոյնս . յարգարել զճանապարհ ուսման և գիտութեան , եթէ կարացեն երբէք միաբանիլ ի խորհուրդդ

Ի Մարտիկեա հրատարակեալ ԼԸ ԲԸԴԻ ՄԱՐՏԻԱՆՈՒՆ ԳԱՂՈՒՄԻՆ ԵՐԱՊԵՐՈՅՈՒՆ 3217 ԹԻՒՆ ԳՆԵՏԵԼԵԱԼ աղգային կարեւոր յօդուածն թարգմանելով կրճադորդեմք մեր ընթերցողաց՝ որոց ուշադրութեանն անշուշտ պիտի չվերային զանազան սխալ կարծիքն , սխալ դատողութիւնքն և չափազանցութիւնքն , որովք լի է յիշեալ յօդուածն ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂՈՒՆ

Արեւելեան դէպքն զհասարակաց ուշադրութիւնն հրաւիրեցին ի վերայ զանազան ցեղից՝ որք օսմանեան կայսերութեան ներքեւ կըզբտնուին , և իւրաքանչիւրն ի նոցանէ բազմաթիւ համակրութիւններ գտաւ Եւրոպիոյ մէջ ։ Մի ցեղ միայն մոռացման ենթակայ եղև և առ ոչինչ գրեցաւ իսկ , թէ և նուազագոյն ուշադրութեան արժանի ժողովուրդ մի չէ ։ Կամիմք սակեալ զհայկազնեան ցեղին . որոյ վրայօք պիտի խօսիմք ։

Հայք իբրև զմեզ՝ կովկասեան ժողովրդոց ցեղին են և աղգային բարբառ իւրեանց ընդհանրապէս դասաւորեալ է ի կարգն Հնդկա-երօպական լեզուաց ։ Այս աղգն՝ չորրորդ դարուն մէջ , առաջինն եղև որ ամբողջութեամբ ընդունեցաւ զքրիստոնէական կրօնն Ասիոյ մէջ , և տակաւին մինչև ցայսօր՝ իբաց առեալանշան թիւ մի Մարտիկեան և Արարացեաց , Արեւելքի միմիայն քրիստոնեայ ժողովուրդն է ։

Փառաւոր և բարեյաջող տէրութիւնն՝ զոր հիմնադրեալ և պաշտպանեալ էին ընդդէմ Պարսից և Արաբացեաց , կործանեցաւ մետասաներորդ դարուն կիսամասին մէջ ի յարձակմանց Յունաց Բիւզանդիոնի մէկ կողմէն և Սելճուքեան Թուրքաց միւս կողմէն ։ Մէկ դարէ ետեւ Հայք բոլորովին նուաճեցան . բայց ընդ լծամբ նոր տէրանց իւրեանց՝ յաղորդեցան ազատել երկու բան . այսինքն զկրօն և զլեզու իւրեանց , որք երկու զլիսաւոր տարերքն են որ և է աղգայնութեան ։ Այսօրուան օրս տակաւին Հայոց աղգն բաղկացեալ է աւելի ի չորս միլիոն ժողովրդոյ՝ բաժանեալ ի մէջ Ռուսիոյ , Պարսկաստանի և Թուրքիոյ ։ Աթոռն եկեղեցական իշխանութեան իւրեանց , այսինքն կաթողիկոսին (մեծ Պատրիարքին) կըզանուի Ռուսիոյ երկիրը վանքի մը մէջ , որ երևանի մօտ է ։

Յամին 1830 միայն 350,000 Հայք գտանէին ի վիճակ Չարին , իսկ այժմ՝ նոցա թիւն մէկ միլիոնի մօտ է . որ յայտնի ապացոյց է յառաջդիմութեան նոցին ի վերայ այս կէտին ։ Բազումք ի նոցանէ փառաւոր յաջողութիւններ ի ձեռս բերին Ռուսիոյ ուսումնարանաց մէջ . և թէպէտ Կովկասեան Հայք ազատ են ի զինուորական ծառայութենէ , այսու ամենայնիւ շատերն իբրև կամաւոր զինուորք ի ծառայութեան կըմտնեն և շուտով կըյառաջադիմեն ։ Ռուսիոյ զօրաբանակն այսօրուան օրս 26 Հայ զօրապետ ունի , որոց մէջ է Լորիս Միլիքօֆ (Մեխրեան) զօրապետն , որում յանձնեցաւ յանձնումն ընդհանուր հրամանատարութիւնն Կովկասեան բանակին ։

Պարսից Շահն ևս գրեթէ 450,000 Հայ ժողովուրդ հպատակ ունի . նմանապէս մի քանի միլիոն(1)Հայք կըգտնուին ի Հնդկաստան , ուր այս ցեղէն մեծահարուստ վաճառականք լինելն կը պատմուի , որք նապապներուն պէս(2)վարթամք

են ։ Հնդկաստանի Հայք առաջինքն եղեն որք հիմնեցին կամ բարերարք հանդիսացան հիմնադրութեան աղգային մեծ վարժարանաց ի Կոստանդնուպօլիս , ի վենետիկ , ի վէննա , ի Բատուլա և ապա ի Փարիզ ։

Գալով Թուրքիայնակ Հայոց , սոցա թիւն երեք միլիոնի չափ է , որք ցրուեալ են Հայաստանի մէջ ի զանազան կողման փաքուին—Ասիոյ , հնոյն Կիլիկիոյ և Եւրոպական Թուրքիոյ Արեւելեան մասին մէջ ։ Ի Կ. Պօլիս Հայք ոչ են նուազ քան 180,000 հոգիս . որոց մտաւորական յաջողութիւնն և հոգատարութիւնն զոր ի գործ կըգնեն առ ի զարգացողանել զդատարակութիւնն ի հասարակութեան իւրեանց՝ ապացուցեալ են իրօք . քանզի ի Կ. Պօլիս և ի շրջակայ նորին եղեալ Հայ դպրոցաց մէջ 20,000էն աւելի աշակերտք դառնին , որոց 16 հազարքն արու են և 4 հազարքն էդ ։

Հայոց աղգն կարող եղև մատակարարել ի ծառայութիւն օսմանեան կառավարութեան գերակայ անձինս թէ տաղանդով և թէ արժանապատուութեամբ ։ Ասոնցմէ հինգն՝ Պետական ժողովոյն անդամ են ։ Հայկազուն ոմն ի մօտ աւելոս նախարար անուանեցաւ վաճառականութեան և հրապարակական շինուածոց , միւս Հայ ոմն խորհրդական կարգեցաւ ի պաշտօնատան հասարակաց կրթութեան , և երրորդ մի ի նոյն աղգէ՝ ընդհանուր անօրէն է թղթակցութեան ի պաշտօնատան արտաքին գործոց , կայսերական կառավարութեան առաջին ճարտարապետն ևս Հայ մըն է ։ Վերջապէս բոլոր Եւրոպան կըճանաչէ զվսե . Օտեան Էֆէնտին՝ որ հրապարակական շինուածոց նախարարութեան խորհրդականն է ։

Ի մէջ զլիսաւոր վաճառականաց Կ. Պօլսոյ բազմաթիւ Հայք գտանին , որոց մէջ յատուկ նշանակութեան արժանի է Բէրայի Հայ ահնավաճառն , որ միլիոններու տէր է ։ Կ. Պօլսոյ մեծ շուկային մէջ շատ Հայ վաճառականք՝ նապաղի գանձեր կըպահեն ի խորս փոքրիկ խանութի միոյ , որ խիստ պարզ և չնչին տեսք ունի ։

Հայք կստեցան միշտ օրինակել , որչափ որ օրէնքն թոյլ կուտային , զհազուստն աշխարհակալաց (օսմանց) . աւելի յօժարամտութեամբ զթուրքերէն կըխօսին քան զլեզու իւրեանց ։ Բարձրագոյն Դրան հպատակ քրիստոնեայ աղգերէն ոչ մէկն աւելի ուրացողներ ունեցաւ և ոչ իրենց կրօնը ուրանալու պատրաստ աւելի կանայս՝ առ ի ամուսնանալ մահմետական արանց հետ ։ Այս տկարամտութեամբ և այս պակասութեամբ հանդերձ , Հայք ոչ նուազ բնական ձրիւք օժտեալ են , և Արեւելեան քրիստոնեայ ժողովրդոց մէջ ամենէն հիւրասէր և ամենէն համակրականն են ։ Ի մասին իմացական կարողութեանց , Հայն՝ հաւասար է Հէլլէնին ։ Պօլսոյ բեռնակիրք՝ մեծ մասամբ Անատոլիէն եկեալ Հայք են , որոց պարկեշտութիւնն և հաւատարմութիւնն հասարակաց առակ դարձած է . իսկ չափաւորութեամբ իւրեանց ի կերակուրս և յըմպելիս՝ կընմանին մեր Օլէրիս գաւառին բնակչացը ։ Ոչ մէկ շտեմարան , ոչ մէկ դրատուն և ոչ տուն մի լաւ պահպանեալ չէ բայց միայն երբ Հայ պահապան կամ դռնապան ունի ։

Այս օրինակ է հայկազուն այս ցեղն . բայց և այնպէս Թուրքիոյ վշտակիր ժողովրդոց մէջ նշաւազագոյն խնայեալն է , իբր թէ իւր հնազանդութիւնն , իւր հլութիւնն և իւր աշխատասէր ունակութիւնք՝ մասնաւոր կերպիւ ցոյց տային զինքն իւր տէրանց հալածանաց և բռնութեանցը և գոթաղդաբար այս ճնշումն վերջանալու մօտ չէ . վասնզի իրենց ցրուեալ կացութեամբ՝ Հայք դադարեցան , իբրև զհրէայս՝ ի լինելոյ աղգ մի , և Հայաստանն այժմ միայն աշխարհագրական նշանակութիւն ունի ։

Սուրբ Էջմիածնայ ԱՐԱՐԱՏ ամառադրոյն փետր. թուոյն մէջ զհետեւեալն ընթեռնուեմք ։

Անցեալ տարուոյ Գեկտ 1—16 ամսաթուով Հնդկաստանի թիւ աւիա քաղաքէն ստացեալ մի գրութենէ կըտեղեկանամք , զի գերա. Գրիգորիս արքեպիսկոպոս ծայրագոյն Նուիրակն 17—19ն Հոկտեմբերի 3—7—11ն Աբգար շողեանուով

Կալակաթայէն մեկնելէ զինի՝ ի 15—27ն ամսոյն (Հոկտ) ի Պինանկ հասած է , (ուր մի տուն Հայ , մի եկեղեցի և մի քահանայ կայ) և նոյն օրը մեկնելով՝ ի 17—29 ամսոյն ի Սինկափօր դնացած է ։ Նոյն օրը անտի ևս մեկնելով՝ ի 24ն դնացած է ի Հօնգ—Բօնկ կղզին , (ուր 7 հոգի միայն երթեալ Հայեր կան առանց ընտանեաց) ի 5—16ն Նոյեմբերի Հօնգ—Բօնկէն վերադարձեր է ի Սինկափօր (ի 10—22ն ամսոյն) և անտի երկու օրէն մեկնելով՝ ի 14—26ն ամսոյ անփսս հասած է ի Բիւալիս ։

Յիշեալ նամակում խոստացած է հետագայ գրութեամբ հաղորդել մանրամասն տեղեկութիւնք և վիճակագրութիւնք ։

Այս առթիւ պարտ կըհամարիմք յատուկ շնորհակալութիւն փոխարինել առ վսեմա. Պ. Աղէքսանդր Յարութիւն Աբգարեանց՝ դուրեւով նորին բարեպաշտութիւնը և եռանդը , որ բարեհաճած է շոյենաւի տոմարկը անձամբ անձին տանել և նուիրել գերա. Գրիգորիս արքեպիսկոպոսին , որով ձրի գնացած է մինչև ի Չին և անտի դարձած է ի Սինկափօր , և պիտի վերադառնայ ի Կալակաթ ։

Ամենուրեք մեր եղբայրք մեծ սիրով և եռանդեամբ դիմաւորած՝ ընդունած և հիւրասիրած են իւրեանց Առաջնորդը և փոխադարձաբար միմիկ արուած ։

Ի շնորհաբեր այցելութիւն գերա. տեր Մեքիսեղէկ Ծ. վարդապետի Մուրատեան , բարեխնամ Սաղնորդի վիճակիս ի Ս. Մեսրոպեան վարժարանն ։

Ի բարեփառ սերկեան յաւուրս ջերմ ցնծութիւն անպատու՝

Ի սիրտ սանուցս յորդ գեղանի և զմեզ վառէ ի յաւիւն .

Տեսեալ զձեր վեհ Սրբութիւն յայցելութիւն խոնարհեալ՝

Աշակերտաց քանի հրճուանք , մատչիմք և յԱլլա Սրբափայլ ։

Շնորհազարդ ձեր Հայրութեան այցելութիւն փառաւոր

Քաջալերէ մատաղերամ զճիւղ՝

հասակ մեր անջօր .

Նոյն իսկ որմունք այս տաճարիս բերկրապարար թինդս առնուն

Հիւրքնկալեալ զբարեջան զսուրբ Հովիւդ մեր արթուն ։

Ոսկեճաճանչ Բոյս երկնառաք՝

վերուստ սլացեալ զիւր պարզէ

Զպերճ դրօշակ ընդ վարժարանս քաղցրաժպիտ և ապէ

«Յօղ իմաստից , լոյս զարգացման

Նդ Առաքութեանըն եղջիւր

Ծաւալեցի ի վարժարանս

և յաշակերտս համասփիւռ ։

Ի նոյն խրախոյս և զօրութիւն մեր զիւրապայթ ուրք տկար

Զօրացին ընդ տաժանելի ուսմանց վարժից առապար .

Ուստի զձեր հայցեմք զցօղ կենդանարար օրհնութեան

Յորդահօտել ի գլուխս մեր յոր կամք մնամք ապաստան ։

Զեր իմաստուն Տնտեսութեան արդիւնք առ մեզ ուռճացեալ ,

Եւ Հայրական խնամոց զգեստ

ընդ աղգս մեր տարածեալ ,

Կեցցուք յաւէտ ի լոյս կենաց ,

կեցցուք ի փառս ձեր շնորհաց

Եւ դարք դարուց միշտ օրհնեցեն

զանուն անմահ ձեր փառաց ։

Մուշեղ Տ. Յ. Քէշիշեան ,
Աղակերտ Ա. դասու Ս. Մեսրոպեան
վարժարանի Զմրուհիոյ ։

Զմիւռնիս , 14 Ապրիլ 1877
Յարդոյ խմբագիր ԱՐՇԱԼՈՒՍՈՅ

Կաղաչեմք որ շնորհ ընէք ձեր աղգօդուս լրագրոյն մէջ հրատարակել զյետագայ շնորհաւարիս մեր որպէս և զօրինակն նամակին ընդունելոյ ի մէջ ի գերա. Աբգարեան վէննայի Միլիթարեան Միտարանութեան ։

(1)Եթէ ճազար քսուի , սխալն գուցէ սակաւ ինչ կըշափաւորի ։
(2)Հնդկաստանի իշխանք ։

Շնորհակալութիւն նախ՝ առ բազմաթիւն Միաբանութիւնն Վէննայի՝ որ մեծա. Յ. Անանեանի միջնորդութեամբ մեր խնդիրը ընդունելով՝ իզմիրի Միւսիթարեան վանատան մեծաւոր վերա. Հայր Նիկողայոս Աւգերեանի կը. յանձնէ ընթերցատան թանգարանին յարմար գիրքերէն մէյմէկ օրինակ հասցընել մեզ, զորս քիչ օրէն կը յուսամք ընդունել:

Երկրորդ՝ շնորհակալութիւն առ մեծա. Յ. Անանեան վաճառականն Վէննայի՝ որ Միւսիթարեան Միաբանութեան առջև ընթերցատան համար բարեխօսելէ զատ, հաճեցաւ նաեւ իւր ազնուամեծար որդւոյն պարոն Ատօքիի անուան ինքնայոժար քսան հատոր գիրք նուիրել ընթերցատան թանգարանին:

Երրորդ՝ շնորհակալութիւն առ մեծա. գրադէտ և հայրենասէր զօրապետն Մ. Միանասրեանց՝ որ Բետրպուրքէն Զմիւռնոյ Հայ Ընթերցատունը յիշելով, իր Պիպիօղրաֆիային առաջին հատորը հաճեցաւ շնորհելու:

Այս նուէրներով կը հաստատուի որ քաղաքիս Հայ Ընթերցատունը ամեն տեղ գտնուած ազգայնոց սիրոյն համակրանայ արժանի ըլլալու պատիւն ունի և որ գրաւակսն մ'է օրըստօրէ յառաջանալուն:

Ընկալալուք և դուք, յարգոյ տէր, մեր շնորհակալեաց հաւատարմքը: Տնօրէն Խորհուրդ Հայ Ընթերցատան:

Ահաւասիկ դերա, Արքաճօր նամակին օրինակը զոր Տնօրէն Խորհուրդոյս ատենապետին ուղղեալ էր. Վէննա, 27 Փետրվար 1877

Աղնուական բարձրապատիւ Տէր,

Հրամանոց փետրվար 3ին դրած և Անանեան Գովհանէս աղայի ձեռօք մեզի ուղղած շնորհալի թուղթն սիրով ընդունեցանք: Մեծապէս ուրախ ենք այդ տեղն ազգիս յառաջացման համար՝ ուրիշ կրթեալ և ծաղկեալ ազգաց օրինակին համեմատ, առանձին ընթերցատուն հաստատելու վրայ, և յայդ մասին ձեր անխնայ ջանքն ու եռանդը գովելուս ատեն՝ դոյն հաստատութեան յաջողութիւն, զարգացում, և յարատևութիւն կրմաղծ ենք ի սրտէ: Երանի թէ Զմիւռնիոյ նախանձելի օրինակն ուրիշ հասարակութիւններն ալ կարող ըլլար յորդորաւիտ ընել:

Մենք այդ ձեր բաղձանացը գործակից ըլլալու, և միանգամայն ձեր ու մեր դիւրութեան համար՝ այս անգամ մեր Զմիւռնական վանատան մեծաւոր Աւգերեան վերա. Հայր Նիկողայոս վարդապետին կրգրենք՝ որ մեր գրաւաճառութեան սենեկէն նոյն վախճանին ծառայող գրքերէն մէյմէկ օրինակ ընթերցատունը հասցնէ: Այսպէս ձեր գովելի բաղձանացն ըստ մեր կարի դոյզն ծառայութիւն մատուցանելէն ետքը՝ կը կնքեմ, յայտնելով զիս

Աղնուականք

Յակ. Վ. Պօզան. արքայ. տը. ա.

ՁԱՆԱԶԱՆ ԷՆԻՐԵՐ

Զմիւռնիա, 46 Ապրիլ:

Երկուշաբթի երեկոյին քաղաքիս Ռուսաց հիւպատոսարանին դրան վերայ եղած Ռուսիոյ կայսերական նշանակաց պատկերն ինչպէս նաեւ դրօշակալի սիւնը վար առնուեցան, և հիւպատոսն հանգերձ իւր ընտանեօք մեկնեցաւ յԱթէնս երթալու: Իսկ Զմիւռնիաբնակ Ռուս հպատակաց պաշտպանութիւնն Գերմանիոյ հիւպատոսարանին յանձնեցաւ:

— Ըստ վերջին լրոյ՝ Ռուսաց զօրաբանակն անցած է զԲրուժ գետն և ասիական սահմանագիւղներն: Իսկ օսմանեան զօրաբանակն ի Դալաֆաթ մտեր և գրաւեր է զայն:

— Իտալիոյ տէրութեան Սան Մարթինօ անուն զրահաւոր ֆուէկաթն յառաջընթաց լինելով նոյն պետութեան նաւատորմին յուղարկելոյ ի կողմանս մեր, չորեքշաբթի առաւօտուն եհաս ի նաւահանգիսն քաղաքիս:

— Հոլանտական Ռէնսէն Մարիա կոչեցեալ պատերազմական նաւն ևս նոյն օրն վերադարձաւ ի նաւահանգիստ մեր:

— Աւստրիոյ Գուսթօս անուն ծովապետական զրահաւոր ֆուէկաթն մէջ փառաւոր հացկերոյթ մի արուեցաւ ի ծովապետ Պարի ասպետ

տէն (որ ընդհանուր հրամանատար է Ագրիական նաւատորմին) ի պատիւ մեր վսե. Վալի Սապրի փաշային, որում ընկերակից եղեալ էր մեծաւոր Տիրան Էֆէնպիս: Իւր նաւահանգիստը գտնուող պատերազմական նաւուց հրամանատարքն ևս ներկայ էին այս հանգիստին:

Յիշեալ ֆուէկաթն չորեքշաբթի օրն մեկնեցաւ Արշիպեղագոսի մէջ պտոյտ մի ընելու:

— Չորեքշաբթի նախ քան զարշալոյսն՝ հրկիւղութիւն մի պատահեցաւ քաղաքիս ճարտի սոքաքի կոչուած թաղը և հոյ ճարակ ըրաւ երկու տուներ: Երոց մէկն ապահովեալ էր:

— Երեքշաբթի երեկոյին մարդասպանութիւն մի տեղի ունեցաւ ի Հայոց թաղն Շահին խանի դրան առջև:

— Հինգշաբթի գիշեր հրկիւղութիւն մի պատահեցաւ. ի Պուռնուլա գեղն և հոյ ճարակ ըրաւ երկու տուն:

— Անցեալ կիրակի և երկուշաբթի օրերն յորդաննքն եկաւ, որ յոյժ օգտակար է մօտաւոր հնձոց առհասարակ:

— Դժբաղդաբար մեծ և փոքրիկ գողութիւնքն կը շարունակեն միշտ: Մեր ստիկանութիւնն ևս իւր կողմանէ ամեն գործունեայ ջանք ի գործ կը դնէ ձեռք ձգելու համար զխարդործներն: Երոց 5—6 հոգի արգէն բռնուեցան և ի բանտ դրուեցան: Կը յուսացուի թէ հարցաքննութիւնքն յերեան պիտի հանեն ուրիշ գողեր և գողակիցներ:

— Զմիւռնոյ վիճակին Հատին Առաջնորդ դերապատիւ Սրաքքարիէդրա արքեպիսկոպոսն, նմանապէս մօտիւ տը Պարկրաֆ՝ որ Գաղղիոյ ընդհ. հիւպատոս է ի քաղաքիս, Մէքիտիէ կարգին Յրդ. աստիճանի շքանշանաւ պատուեցան:

— Քաղաքիս Բունաց ազգային մեծ դպրոցն՝ «Վանկէլիքի Սիօլի» անուանեալ, դրամական այնպիսի մեծ նեղութեան մէջ կը գտնուի, որ գոցուելու վտանգէն սպառնացեալ է, եթէ յիշեալ դպրոցին Հոգաբարձութեան ի քաղաքակից ազգայնոց իւրոց խնդրեալ հանգանակութիւնն օգնութեան հասնի:

— Կը լսեմք թէ ի Կ. Պօլիս Դալաթիա թաղին մէջ՝ Հայկական Կեդրոնական բարձրագոյն վարժարան մի հիմնադրելու հոգ կը տարուի՝ ազգային Վարչութեան գործունեայ ջանքն:

— Կը գրին ի Կ. Պօլսոյ թէ վսեմա. Արքաճօմ փաշան ըստ հրաւիրանաց Խըաիվին՝ մեկնեցաւ յԵփրատու երթալու:

Նորին Վսեմութիւնն անցեալ չարաթ առաւօտուն աւստրիական չորեհաւով եհաս ի քաղաք մեր, և երեկոյին շարունակեց զճանապարհորդութիւն իւր՝ յԱղէքսանդրիա երթալու:

— Եփրատունէ ամսոյս 12—24էն արձակեալ հեռագիր մի կը ճանուցանէ թէ Խըոփին որդին բարձրա. Հասան փաշա իշխանն ի Պօլիս պիտի երթայ՝ այնտեղ գտնուող Եփրատական զօրաց հրամանատարութիւնն իւր վրայ առնելու համար:

— Կը հաւաստեն, կրտէ ՎիՉԱՆԴԻՍ յոյն լրագիրն Կ. Պօլսոյ, թէ իսկոյն ի դադարիլ պաշտօնական յարաբերութեանց, Բ. Դուռն փութացաւ յայտագիր մի յուղարկել առ հինգ մեծ տէրութիւնն (ի բաց առեալ Ղուսիսին), յիշեցունեալով նոցա զՅերոյդ յօդուածն Պարիզի դաշնագրութեան, որ կը տնօրինէ թէ՛ Բ. Դրան և ուրիշ որեւէ մեծ տէրութեան մէջ եթէ պատերազմ սպառնացող անհամաձայնութիւն մի պատահի, յիշեալ դաշնագրութեան ստորագրող միւս մեծ տէրութիւնքն կը հրաւիրուին մօտաւոր պատերազմին առաջն անունը՝ միջնորդական ներգործութեամբ իւրեանց:

— Կը լսեմք թէ Մեծին—Բրիտանիոյ ծովային զօրութեանց նախարարն իմաց տուած է Միջերկրական ծովուն անգղիական նաւատորմին ընդհանուր հրամանատարին, թէ Կ. Պօլսոյ դեսպանին հրամանաց ներքեւ կը գտնի, և պարտի ամեն կերպիւ նորա հրահանգացը հետեւիլ ուստի անգղիական նաւատորմից կը պատրաստուի կըսեն, մերձեցալ ի Տարանէլ:

— Հեռագրական լուրերն կը ճանուցանեն թէ Ռուսաց զօրադուռքն Մոլտովալաքիայի իւրաքայլաւ քաղաքին տիրեր են, և թէ ի սահմանադրութիւն Ասիոյ՝ Պոլսոյ մի, Արտաիանի և Կիւմ

րիւի մօտ փոքրիկ ֆալտամարտութիւնքն եղել են առանց կարեւոր վախճանի մը:

— Փարս գէն հասեալ հեռագրէ մի հետեւեալ տեղեկութիւնը կուտայ:

«Ա. ոյլ մ» անախցութիւնքն կատարեալապէս դադարեցան ի մէջ: Ըրո իոյ կառավարութեցայտու առեւայնիւ մեծ տէրութիւնքն մտադիր են՝ առաին բաւեպատեհ առթիւ աշխատել յորդորելու և համոզելու զպատերազմող տէրութիւնն, որպէսզի դադարեցնեն զթշնամութեան գործքերը:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակը դիւրաւաճառ է միշտ ի գին 335—345ի մեքենայով մաքրուածը, և 320 շուրուի առ կենդինարն Առանայի տեսակը:

Աֆիօնն մեծ շարժումն ունեցաւ յանդիւմ և յայտմ շաբաթու. քանզի 300 կողովէն աւելի վաճառեցաւ վասն Ամերիկայի: Վերջին վաճառմունքն 150 զուրուի ելին առ շէքին և 10 կողով Պողատքի աֆիօն ծախուեցաւ ի Վիէտո դեղավաճառութեան ի գին 175ի: Այս գինքն առայժմ հաստատուն են, թէ և բարեշաղո և առատ կերելի առաջիկայ հունձն:

Տրքերը շատ կուղուր և գիներն բարձրացան, վերջին վաճառումն 48 զուրուի եղև քիլէն:

ԾԱՆՈԹՈՒՄ

Յարգոյ տօքթօր Բ. Բանկայօ բժիշկն կը իտքայ իմաց տայ քաղաքիս հասարակութեան՝ քէ իւր ջրաբուժական հաստատութեան բացուելուն եւ գոցուելուն ժամերն ըստ երոպացոց, հետեւեալ կերպիւ որդեալ են՝ սկսեալ ի 1—16էն Ապրիլի 1877:

Վասն արանց՝ առաւօտեան ժամը 7էն մինչեւ 10, եւ կեսօրէն ետեւ ժամը 6էն մինչեւ 7:

Վասն տիկնայց՝ առաւօտեան ժամը 10էն մինչեւ 4 և Ե. եւ ժամը 4էն մինչեւ 6 զկնի կիսաւոր:

Ջրաբուժական այս պատուական հաստատութեան առողջաբար արդիւնքն արդէն ժանօք Են մեր քաղաքակցաց շատերուն, որք վանագան հիւանդութեամբ համակեալ յիշեալ ջրաբուժական հաստատութեան զարմանին զիմեցին, եւ նուաւ կատարեալապէս առողջացան: Այս զարմանք տօքթօր Բ. Բանկայօին խնամօքն եւ վերատեսչութեամբ կը տրուի, որ միտ ներկայ կը գտնուի իւր ջրաբուժական հաստատութեան մէջ:

ԻՕՈՒՆ ՏՐ ՄԻՊՈՒՐ

Մարիօն տը Լօրմի խոստովանեցը, կամ Պատմական տարիանք:

Բարոյական գեղեցիկ վիպասանութիւն մըն է, զոր կը թարգմանէ ի գաղղիարէն շքնագրէն ի աշխարհիկ բարբառ՝ յարգոյ Գրի. Չիլինկիրեան ուսումնականն: Առաջին հատորն արդէն ի լոյս ընծայեցաւ ի Տէտէեան տպարանի քաղաքիս ուր մաքուր տպագրութեամբ հրատարակեցաւ նաեւ ներկայ երկրորդ հատորն, որ բաղկացեալ է յուրձաւ 210 էրեսաց:

Իւրաքանչիւր հատորն արժէ 2 ֆրանք:

Աղքատաւիրաց ընկերութեան դեղարանն առաջին տեսակ դեղեր կը գտնուին, զորս ընկերութիւնն ուղղակի Եւրոպայէն բերել կուտայ: Ուստի կը յորդորեմք զբարեսեր հասարակութիւնն, որ ի պահանջել հարկին նոյն դեղարանին դիմեն, որոյ արդիւնքն ինչպէս յայտնի է, ի նպաստ աղքատաց սահմանեալ են:

ԱՐԱՄԱՆ ՏՐԱՆՍԻՏ

1877 ի Կ. Պօլս

Ղեկեցկատիպ պատուական օրացոյց մըն է, բաղկացեալ յ'302 էրեսաց, որ կը պարսկական գաճազան օգտակար տեղեկութիւններ ի վերայ ազգային կեդրոնական վարչութեան, թուրքիոյ հեռագրական եւ քրատարաց վարչութեան, նմանապէս եւ վիճակագրութիւն թուրքիոյ եւ միւս երոպայ տեղութեանց:

Խմբագիր—տէր Լրագրոյս,
Ղ. Կ. Գ. Պալատէն:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԼՈՅՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ